15-ՐԴ ՆԻՍՏ

6 սեպտեմբերի 1918թ.

Նիստը բանալով՝ պ. *Նախագահը* հայտարարում է հետևյալ օրակարգը.

1. Պատգամավորական օրապահիկի օրինագծի երրորդ ընթերցումը.
2. Դպրոցական օրինագծի Բ և Գ ընթերցումը.
3. Օրենսդրական հանձնաժողովի զեկուցումը քրեական դատավարության մի քանի կետերի մասին.
4. Օրենսդրական հանձնաժողովի կազմած օրինագիծը օրենքներ հրատարակելու մասին.
5. Հանձնաժողովների զեկուցումները.
6. Ընթացիկ գործեր, խմբագրական հանձնաժողովի ընտրությունը:

Պ. նախագահը հայտնում է, որ կառավարությունից ստացվել է բամբակի պետականացման օրինագիծ, որը և նակազի համաձայն հանձնվում է պարենավորման հանձնաժողովին:

Ապա կարդացվում է նախագահության ստացած մի քանի ընթացիկ թղթեր:

Ա. Զառ գյուղի բնակիչները բողոքում են, որ իրենց ցանքսերը զինվորների կողմից թալանի են մատնվում:

Բ. Մուսուլման պատգամավորները նույնպես բողոքում են, որ Երևանի միլիցիայի պետը թալանված պատգամավորի իրավունքը չի պաշտպանել:

Երկու բողոքն էլ ուղղված է համապատասխան մինիստրներին:

Գ. Բաշգյառնի գյուղը բողոքում է, որ պարենավորման մարմինը չափից ավելի ցորեն է պահանջում: Այդ գրությունը ուղարկված է պարենավորման վարչությանը:

Սոց. դեմոկրատական, սոց. հեղափոխական և Հ[այ] ժող. կուսակցության ֆրակցիաների կողմից առաջարկվում է պատգամավորական օրապահիկի օրինագծի Գ ընթերցումը հետաձգել, որովհետև իրենք պետք է խորհրդակցեն այդ նյութի մասին:

Առաջարկությունն ընդունվում է: Խորհրդարանն անցնում է օրակարգի Բ կետին:

Զեկուցանող պատգ. *Տիգրանյանը* առաջարկում է առաջնորդող սկզբունքների մեջ օրենքի բնույթ կրող հոդվածները քվեարկության դնել:

Այդ հոդվածներից մեկն է Է. կետը:

Ա. Խոնդկարյան - Առաջարկում է սկզբից կարդալ հոդված առ հոդված և ապա որոշել, թե ո՞ր հոդվածներն օրենքի բնույթ են կրում և որոնք առաջնորդող սկզբունք են:

Առաջարկությունն ընդունվում է:

Ա. հոդվածը խորհրդարանը միաձայն ընդունում է որպես առաջնորդող սկզբունք:

Բ. հոդվածը դուրս է հանվում՝ որպես դպրոցական ապագա բարեփոխությունները կաշկանդող կետ:

Խոնդկարյանը և Ա. Մխիթարյանը առաջարկում են Գ կետը հանել. *Տիգրանյանը և Ռաշմաճյանը* պնդում են, որ այդ կետը պետք է մնա, իսկ վերջինս ավելացնում է նաև, որ բացվելիք դպրոցների շարքում պետք է հաշվել նաև արևմտահայ դպրոցները:

Գ. կետը պատգ. *Խոնդկարյանի* առաջարկությամբ ընդունվում է որպես առաջնորդող սկզբունք, հետևյալ փոփոխություններով. «պահել եղած դպրոցները և բանալ նորերը»:

Դ. և Ե. կետերը, որպես առաջնորդող սկզբունքներ, միաձայն ընդունվում են խորհրդարանի կողմից: Զ, Է և Ը կետերը անցնում են որպես առաջնորդող սկզբունքներ, հետևյալ ուղղումներով. Զ կետի վերաբերյալ՝ պետությունից նպաստ ստանալը չի ծառայում որպես նշան և ապացույց, որ դպրոցը դառնում է պետական կառավարչական, որովհետև հայտնի չէ, թե ապագայում դպրոցը ու՞մ ձեռքը կանցնի: Է կետի վերաբերյալ՝ դպրոցի պետականացման կարգը մերժվում է և գերադասելի է դառնում ազատ և հասարակական դպրոցի սկզբունքը: Ը կետը ընդունվում է հետևյալ հավելումով. նորմալ պայմաններում դպրոցի տնտեսական մասը հոգացվում է տեղական միջոցներով և համայնական հարկատվության ձևով:

Պատգ. *Զուբյանի* առաջարկությամբ Ժ կետը առաջնորդող սկզբունքներից հանվում է և որոշվում է քննության ենթարկել դպրոցական օրինագիծը քննելիս:

ԺԱ. կետը ևս համարվում է օրենսդրական բնույթ ունեցող և հետաձգվում է:

Այնուհետև խորհրդարանն անցնում է ժամանակավոր օրինագծի քննությանը:

Ա. հոդվածի մասին լինում են կարծիքների փոխանակություններ, որից հետո ընդունվում է, որ այդ կետը պետք է մաս-մաս քվեարկել:

ա) Դպրոցական մարմինը մտնում է կառավարության կազմի մեջ: Անցնում է 21 ձայնով:

բ) Ինչպե՞ս է կազմակերպվում դպրոցավար մարմինը. կոլեգիա՞լ, թե՞ միանձնյա:

Դպրոցական վարչության կոլեգիալ կազմի դեմ արտահայտվում է *Դ. Զուբյանը* և առաջարկում է ուղղակի քվեարկել, թե ո՞ր մինիստրությանը կցել:

Թ. Ավդալբեկյան - Առաջարկում է այդ հարցը թողնել մինիստրական շտատներ մշակող հանձնաժողովին և քննել այդ հարցը, երբ այդ օրինագիծը կքննվի:

Ս. Տիգրանյան - Երբ դպրոցական հանձնաժողովը բերում է որոշ օրենք, և խորհրդարանն ընդունում է, դա կլինի շտատների հանձնաժողովի համար մի դիրեկտիվ: Մյուս կողմից, շտապողական է մարմնի ձևի որոշումը, որից կախված է դպրոցների վերաբացումը:

Քվեարկության է դրվում «Դպրոցական գործը հանձնել առանձին մինիստրի» առաջարկը, որը և անցնում է 18 ձայնով, հակառակ 14-ի:

Բ կետը *Հ. Ազատյանը* առաջարկում է փոխել հետևյալ մտքով. քաղաքներում և գյուղերում դպրոցները ենթարկվում են տեղական ինքնավարություններին:

Ս. Տիգրանյան - Այդ կետը ընդունվում է ոչ թե այստեղ, այլ ուրիշ հոդվածում:

Հ. Ազատյան - Պնդում է իր ասածի վրա, պատճառաբանելով, որ եթե դա չլինի, քաղաքներում շատ դպրոցներ չեն բացվի:

Թ. Ավդալբեկյան - Առաջարկում է լուսավորության մինիստրին կից ունենալ դպրոցական գլխավոր կոմիտե, որի կազմի մեջ կլինեն փոքր ազգերի ներկայացուցիչները:

Ա. Խոնդկարյան - Նկատում է, որ իշխանությունը պետք է մասնավորել մինիստրի, նրա դեպարտամենտի և ապա տեղական ինքնավարությունների մեջ:

Դ. Զուբյան - Փոքրամասնության իրավունքը պաշտպանող օրենքներ կան օրինագծի մեջ, կարիք չկա նոր մարմիններ ստեղծելու և ավելորդ ծախքեր անելու: Այս միտքը պարզելու համար բերում է օրինագծի մի քանի հոդվածները:

Ս. Մալխասյան - Հ. ժողով. կուսակցության ֆրակցիան անհրաժեշտ է համարում, որ լուսավորության մինիստրին կից լինի ուսումնական խորհուրդ՝ առանց

ծախքերին ուշադրություն դարձնելու: Դա կարևոր է նաև փոքրամասնություն կազմող ազգերի իրավունքը պաշտպանելու համար:

Ի. Զորին - Բացատրում է, որ օրինագծի մեջ չի ապահովված փոքրամասնության իրավունքը, հետևապես, լուսավորության մինիստրին կից գլխավոր ուսումնական խորհրդի գոյությունն անհրաժեշտ է:

Հ. Ազատյան - Յուրաքանչյուր մինիստր կարող է խորհուրդ ունենալ իրեն կից, որի մեջ կարող են մասնակցել փոքրամասնության ներկայացուցիչները. բոլորովին իզուր է այն մտավախությունը, թե դեմոկրատիկ հանրապետության մեջ փոքրամասնությունը կճնշվի:

Դ. Զուրաբյան - Բացատրում է, որ եթե մեր քաղաքականությունը ազատ և անկեղծ լինի փոքր ազգերի վերաբերմամբ, բոլորովին ավելորդ են այդպիսի մարմինները: Ազգային հիմունքներով կազմված այդպիսի մարմինները ավելի ևս վատթարացնում են ազգերի հարաբերությունները:

Թ. Ավդալբեկյան - Պաշտպանում է իր առաջարկը, որ լուսավորության մինիստրին կից պետք է լինի խորհուրդ, որի մեջ պետք է փոքրամասնության ներկայացուցիչներ լինեն ոչ թե նրա համար, որ ձայն տան, այլ գերազանցապես իրենց ազգի կարիքների հետ ծանոթացնելու համար:

Տ. Ռաշմաճյան - Լուսավորության մինիստրության կից մշտական խորհուրդ ստեղծելու կարիք չենք զգում, սակայն ինքը՝ լուսավորության մինիստրը, պահանջել հարկին՝ կունենա ժամանակավոր մի քանի խորհրդակցական մարմիններ զանազան շրջաններից, որտեղ կմտնեն նաև փոքրամասնության ներկայացուցիչները:

Ս. Տիգրանյան - Բացատրություններ է տալիս, որ Անդրկովկասյան իշխանության կողմից արդեն ընդունվել և տնօրինվել էր ազգային կուլտուրական ինքնօրինության մասին [դրույթը]: Սակայն, որովհետև այս կետը բոլորովին նոր ձևակերպություն է ստանում, գուցե կարելի կլինի այս հոդվածը հանձնել դպրոցական հանձնաժողովին՝ վերամշակելու, կամ կազմել խորհրդակցական ձայնով կրթական մինիստրության կից զանազան ազգերի ներկայացուցիչներից բաղկացած մի մարմին:

Ս. Խաչատրյան - Առաջարկում է այդ խնդրի լուծումը հանձնել նոր ընտրվելիք լուսավորության մինիստրին:

Դ. Զուբյան - Առաջարկում է ամբողջ օրինագիծը հանձնել դպրոցական հանձնաժողովին, նորից մշակելու համար:

Ս. Տիգրանյան - Առաջարկում է դպրոցական հանձնաժողովին տալ միայն հատուկ վերամշակման ենթակա խնդիրները և ոչ ամբողջ օրինագիծը:

Քվեարկվում է Տիգրանյանի առաջարկը, որը և անցնում է 30 ձայնով:

Խորհրդարանը շարունակում է Ա հոդվածի ա) մասի քննությունը: Սոց. դեմոկրատական ֆրակցիան առաջարկում է Ա հոդվածի ա) մասը փոխել հետևյալ ձևով. «Քաղաքներում և գյուղերում դպրոցները հանձնվում են տեղական ինքնավարություններին, իսկ այնտեղ, որտեղ նման հիմնարկություններ չկան, դպրոցները կհանձնվեն նրանց ստեղծվելու օրից»:

Առաջարկությունն անցնում է 18 ձայնով, հակառակ 11-ի:

Օրինագծի նախկին Բ և Գ հոդվածները հանվում են:

Օրինագծի Դ հոդվածը դառնում է Բ, ըստ որի գլխավոր կոմիտեի փոխարեն պետք է լինի կրթության մինիստր:

Հ. Ազատյան - Առանձին մինիստրության սկզբունքն ընդունելով, օրինագծի հիմնական հոդվածները փոփոխության են ենթարկվում. ուստի առաջարկում է օրինագիծը վերադարձնել հանձնաժողովին՝ վերամշակելու, համաձայն խորհրդարանի ընդունած սկզբունքների: Առաջարկությունն ընդունվում է 24 ձայնով:

Օրակարգի Դ խնդրի քննությունը հետաձգվում է, որովհետև օրենսդրական հանձնաժողովը օրենքները քննելիս հնարավորություն չի ունեցել հրավիրելու արդարադատության մինիստրին:

Այնուհետև *Ս. Տեր-Մարտիրոսյանը* մանդատային հանձնաժողովի կողմից զեկուցանում է, որ սոց. հեղ. ֆրակցիայից հեռանում են պատգամավորներ Գրիգոր Տեր-Օհանյանը և Արմենակ Ավետիքյանը, որոնց փոխարեն համապատասխան մանդատներով ընդունվում են Գուրգեն Խարմանդարյանը և Տ. Մուշեղյանը:

Նույն կարգով սոց. դեմ. ֆրակցիայից հեռանում է Մ. Ղարաբեգյանը և ընդունվում է Աբրահամ Մալխասյանը:

Վերջում խորհրդարանն անցնում է ներքին գործերի մինիստրի՝ խորհրդարանին ներկայացրած՝ խոլերայի ժամանակ ծառայության մեջ մահացող բժշկական պերսոնալի [անվտանգության] ապահովության հարցի քննությանը:

«Զանգ», 17սեպտեմբերի 1918թ.